ինքն՝ Խոջայ Մէլիք Աղային եւ կողակցին իւրոյ Նաչխունի, եւ որդոցն Միքայէլին, Աղա Խաչիկին, Սինանին, եւ Բազումին, եւ քեռ սոցա Սոլթանփաշէ, երկու Մէլիքնազին: Արդ ես Աղա Խաչիկս, որ հռչակեալ Պզտիկ աղաս եմ, իմ յօժարութեամբն եւ այլ վարիսներով (ժառանգորդներով) այս հինգ գիրս ընծայ եւ վախմ (վագֆ) արարաք Սբ. Ամենափրկչի վանացն: Ի թուին ՌՃԺԶ (1667)ումն յուլիս ամսոյ ԻԸ (28): Ես Մէլիք Աղէ որդի՝ Աղա Խաչիկս, որ մանշուր (հռչակաւոր) Պզտիկ աղայս անորդի, իմ յօժարութեամբն վերոյգրեալ հինգ գրեանքն վախմ (վագֆ) եւ յիշատակ արարի Սբ. Ամենափրկչի վանացն, մօրեցի (կնքեցի) վկայութեամբ: (քառակուսի կնիք ԱՂԱ ԽԱՉԻԿ)»:

«Ես Սինանի կողակից Մարիամս, ես Սինանի դուստր Սոլթանփաշէ, եւ ես Սինանի որդի Իսրայէլս, այս վերոյգրեալ գրեանցս՝ որ են հինգ, Ամենափրկչին վախմ (վագֆ) արարինք մեր կամաւն եւ մեր յօժարութեամբն: Ես Բազումի դուստր Նաչխունս[17], իմ յօժարութեամբն այս վերոյգրեալ հինգ գիրքն Սբ. Ամենափրկչին վախմ (վագֆ) եւ յիշատակ տուաք, վասն իմ ծնողաց հոգւոյն, որ միաբանքն կարդան, մեր ծնողաց հոգւոյն ողորմեսցի ասեն եւ մեզ եւս»:

Այս ընծայագրին համաձայն, մագաղաթեայ Աստուածաշունչը, ոսկեկազմ (ոսկէ տուի, «Իստամբոլու բանն», այսինքն՝ Կ. Պոլսոյ ոսկերիչի գործ, մէկն էր այն հինգ գիրքերէն: Միւս չորսը թղթեայ էին. Միխայէլ Ասորիի Ժամանակագրութեան օրինակ մը, գուցէ այժմ վանքին հաւաքման թիւ 243ը, գրուած Քրիստոսի 1248 թուականին. «Հարցմունք»ը՝ Գրիգոր Տաթեւացիի «Գիրք Հարցմանց» հատորի մէկ օրինակը ըլլալու է, «Դատաստանագիրք»ը՝ հաւանաբար Գօշինն է, գուցէ վանքի հաւաքման թիւ 105ը, իսկ «պատմագիրք-բառգիրք»ը յայտնի չէ թէ ինչ է: Գուցէ խնամքով կատարուած քննութիւն մը, վանքին ձեռագրական հաւաքման մէջ, կարենայ որոշել այս հինգ ձեռագիրները:

Մէլիք Աղայի ձեռագիրները ցոյց կու տան թէ գրքի մարդ էր ան, եւ սովորական ձեռագիրներէ աւելի մասնագիտական հատորներ հաւաքած ըլլալը նշան է թէ բաւականաչափ կրթուած անձ մըն էր, պատմական ու կանոնագիտական հարցերով շահաքրքրուող:

Մէլիք Աղայի կինը կը կոչուէր Նաչխուն:

Մէլիք Աղայ շատ երկար չ՝ապրիր. կը վախճանի 1622 թուականին, ըստ իր տապանագրութեան, զոր նոյնպէս անձամբ արտագրած եմ 1972ին, Նոր Ջուղայի գերեզմանատան մէջ, այս գերդաստանին

17. Այս Բազումը՝ Խոջայ Խաչիկի որդին էր (եղբայր՝ Խոջայ Սաֆարի), որ աղջիկ մը ունէր՝ Նաչխուն անունով: Պէտք չէ շփոթել Մէլիք Աղայի կնոջ՝ Նաչխունին հետ: